

ԹԻԼ 27176

Փետրուար 10, 1981

Արժանաշնորհ  
Տ. Գառնիկ Քհնյ. Հալլաճեան  
Հովիւ Ս. Խաչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ժխական Խորհուրդի  
Եռնիքն Սիթի.

Սիրելի Տէր Գառնիկ,

Ստացած ենք Յունուար 29, 1981 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 25ին գումարուած համայնքիդ Երխական Ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեանց արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ գտորել տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժխական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Չարլզ Աբգարեան  
Ժան Յովսէփեան  
Արմէն Գալպեան  
Հըրպըրթ Թազագճեան  
Պառնիկ Շէնլուկեան  
Լուսի Սվաճեան